

Արձանագրություն թիվ 2

29.02.2016թ.

գ.Մարտունի

2016 թ. փետրվարի 29-ին տեղի ունեցավ Մարտունի համայնքի ավագանու հերթական նիստը: Նիստին ներկա էին ավագանու անդամներ Արթուր Միրզոյանը, Կարեն Հովհաննիսյանը, Լևոն Օհանյանը և Տիգրան Ղազարյանը, նիստը նախագահեց համայնքի ղեկավար Արթուր Ասատրյանը, քարտուղարն էր աշխատակազմի քարտուղար Մարգիս Երիցյանը:

Օրակարգ.

4. Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի հաշվետվության մասին:

5. Մարտունի համայնքի զարգացման ծրագրի դոնոր կազմակերպությունների հաշվետվությունների քննարկման և նոր առաջարկությունների մասին:

6. Մարտունի համայնքի թվով երկու ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

Լսեցին.

4. Ձեկուցողը (համայնքի ղեկավար Արթուր Ասատրյան) ներկայացրեց, որ սեփական եկամուտներից հողի հարկի մասով նախատեսած 1 095 000 դրամի փոխարեն փաստացի կատարվել է 713 112 դրամ, գույքահարկի մասով նախատեսած 692 900 դրամի փոխարեն հավաքագրվել է 687 000 դրամ, հողի վարձավճարների մասով նախատեսված 375 600 դրամի փոխարեն փաստացի հավաքագրվել է 290 000 դրամ: Ներկայացրեց նաև, որ հողի հարկի մասով հավաքագրումը ամբողջությամբ չի կատարվել անհուսալի ապառքների պատճառով, դրանք այն սեփականատերերն են, որոնք մահացել են, ժառանգություն չի ճանաչվել, կամ սեփականատերերը գտնվում են ՀՀ սահմաններից դուրս և հողերը չեն մշակվում:

Արտահայտվեցին.

4. Ավագանու անդամներ Ա. Միրզոյանը և Տ. Ղազարյանը առաջարկեցին ձեռք առնել միջոցներ գումարների հավաքագրումը կազմակերպելու համար, առաջարկեցին 80 000 դրամ և ավելի պարտք ունեցողների համար կազմել ժամանակացույց պարտքերը մարելու համար:

Ավագանին որոշում է.

4. Հողի հարկի և վարձավճարների գումարների հավաքագրումը կազմակերպելու համար 80 000 դրամ և ավելի պարտք ունեցողների հետ կազմել ժամանակացույց պարտքերը մարելու համար:

Քվեարկության արդյունքներն են՝

Կողմ - 4

դեմ - 0

ձեռնպահ - 0

ավագանու անդամներ՝

Ա. Միրզոյան

Կ. Հովհաննիսյան

Տ.Ղազարյան
Լ.Օհանյան

Լսեցին.

5. Ձեկուցողը (համայնքի ղեկավար Ա.Ասատրյան) ներկայացրեց Մարտունի համայնքի զարգացման ծրագրի դոնոր կազմակերպությունների 2015 թվականին իրականացրած ծրագրերի հաշվետվությունները (համայնքի կայքում՝ martunigyugh.am տեղադրված են կազմակերպությունների հաշվետվությունները):

Ավագանին որոշում է.

5. Մարտունի համայնքի զարգացման ծրագրի դոնոր կազմակերպությունների գործունեությունները գնահատել շատ բարձր և արդյունավետ: Առաջարկել կազմակերպություններին համագործակցել նաև ներհամայնքային ճանապարհների նորոգման, համայնքի գերեզմանոցի ցանկապատման, մշակույթի տան տանիքի վերանորոգման, համայնքի երեխաների խաղահրապարակի կառուցման և համայնքի երիտասարդների ժամանցային սենյակի կահավորման համար:

Քվեարկության արդյունքներն են՝

Կողմ - 4

դեմ - 0

ձեռնպահ - 0

ավագանու անդամներ՝

Ա.Միրզոյան
Կ.Հովհաննիսյան
Տ.Ղազարյան
Լ.Օհանյան

Լսեցին.

6. Ձեկուցողը (համայնքի ղեկավար Ա.Ասատրյան) ներկայացրեց, որ համայնքի թվով երկու ընտանիքներին դիմումների համաձայն անհրաժեշտ է տրամադրել դրամական օգնություն՝ ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման նպատակով և առաջարկեց համայնքի բնակիչ Վանիկ Հայրապետյանին և Հրայրա Նահապետյանին տրամադրել յուրաքանչյուրին 60 000-ական դրամ դրամական օգնություն:

Արտահայտվեցին.

Համայնքի ավագանին տվեց իր համաձայնությունը:

6.Ավագանին որոշեց՝

Համայնքի բնակիչներ Վանիկ Հայրապետյանին և Հրայրա Նահապետյանին տրամադրել յուրաքանչյուրին 60 000-ական դրամ դրամական օգնություն:

Քվեարկության արդյունքներն են՝

Կողմ - 4

դեմ - 0

ձեռնպահ - 0

ավագանու անդամներ՝

Ա.Միրզոյան

Մարտունի համայնքի ղեկավար՝
քարտուղար՝

Կ.Հովհաննիսյան
Տ.Ղազարյան
Լ.Օհանյան
Ա.Ասատրյան
Ս.Երիցյան